



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 10 » մարտի 2015թ.

N 27

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով, համաձայն ԼՂՀ դատախազության Կանոնակարգի 9-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ կետերի և «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնում /այսուհետ բաժին/, ըստ զբաղեցրած պաշտոնների, կատարել հետևյալ աշխատանքի բաժանումը.

1) Բաժնի պետ Կ.Գ.Գաբրիելյանին՝

1.1 Կազմակերպել և իրականացնել աշխատանքների ընդհանուր ղեկավարում:

1.2 Վերահսկել բաժնի աշխատակիցների վրա դրված պարտականությունների կատարումը:

1.3 Ապահովել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործերի վերաբերյալ ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների և կարգադրությունների, ոլորտը համակարգող տեղակալի ցուցումների կատարումը:

1.4 Առաջարկություններ ներկայացնել ոլորտը համակարգող ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ բաժնի աշխատակիցներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

1.5 Մասնակցել ԼՂՀ գլխավոր դատախազության աշխատանքային ծրագրի նախապատրաստման աշխատանքներին:

1.6 Կազմակերպել բաժնի վիճակագրական հաշվետվության կազմման աշխատանքները:

1.7 Հրավիրել օպերատիվ խորհրդակցություններ:

1.8 Կատարել ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարությունները:

1.9 Անհրաժեշտության դեպքում իրականացնել ԼՂՀ ԿԱ ոստիկանության քննչական վարչության քննիչների կողմից քննվող քրեական գործերով և նյութերով դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում:

Բաժնի պետը բաժնի գործունեության համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ գլխավոր դատախազի առջև:

2) Բաժնի ավագ դատախազ Ն. Հ. Մարգսյանին՝

2.1 Վերահսկել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի, Ասկերանի, Շուշիի և Քաշաթաղի շրջանների դատախազությունների կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գծով աշխատանքները:

2.2 Անհրաժեշտության դեպքում իրականացնել ԼՂՀ ԿԱ ոստիկանության քննչական վարչության քննիչների կողմից քննվող քրեական գործերով և նյութերով դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում:

3) Բաժնի դատախազ Գ.Ռ. Հայրապետյանին՝

3.1 Վերահսկել ԼՂՀ Մարտունու, Հաղրուքի, Մարտակերտի և Շահումյանի շրջանների դատախազությունների կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գծով աշխատանքները:

3.2 Անհրաժեշտության դեպքում իրականացնել ԼՂՀ ԿԱ ոստիկանության քննչական վարչության քննիչների կողմից քննվող քրեական գործերով և նյութերով դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 49 առ 21.05.2009 թ. « Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին» հրամանը:

3. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղշրջդատախազներին:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա. Մոսիյան